ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 4

«15» ապրիլի 2024 թ.

ք.Երևան

Պետական գույքի կառավարման կոմիտեն՝ (այսուհետ՝ համապատասխան մարմին կամ Կոմիտե), ՀՀ ք.Երևան, Տիգրան Մեծի 4) ի դեմս **Գլխավոր քարտուղար Մարո Գեղամի Մարգարյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, և քաղաքացի՝ ՀՀ ք.Երևան, Մառի փողոց, 11 շ., 3 բն. հասցեի բնակիչ **Միեր Կարպուշայի Հովսեփյանը** (այսուհետ՝ փորձագետ), (նույնականացման քարտ՝ 013035225, տրված 011-ի կողմից, 25.02.2022 թ., հանրային ծառայությունների համարանիշ՝ 2012790380) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Համապատասխան մարմինը փորձագետին հանձնարարում է իրականացնել որոշակի աշխատանքներ, որոնց նկարագրությունը նշված է Պայմանագրի 1.3-րդ կետում և պարտավորվում է վճարել նրա կատարած աշխատանքի համար, իսկ փորձագետը պարտավորվում է կատարել հանձնարարված աշխատանքները Պայմանագրով սահմանված պայմաններով:

1.2. Փորձագետն անմիջականորեն ենթարկվում է Կոմիտեի քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնի պետին: Աշխատանքների կատարման վայրն է՝ Կոմիտեի գտնվելու վայրը (ք.Երևան, Տիգրան Մեծի 4):

1.3. Պայմանագրով փորձագետին առաջադրվող աշխատանքը ներառում է՝

1.3.1. Կոմիտեի կայքի սպասարկում.

1.3.2. Օրական, շաբաթական և ամսական պահուստային կրկնօրինակների ստեղծում.

1.3.3. Կայքի վերականգնում պահուստային կրկնօրինակներից՝ ըստ անհրաժեշտության.

1.3.4. Կայքի կառուցվածքային և արտաքին տեսքի փոփոխություններ, նաև բաժինների ծրագրային թարմացում.

1.3.5. Կայքի այցելությունների և որոնողական համակարգերում կայքի տեսանելիության վերաբերյալ պարբերաբար մոնիթորինգի իրականացում, անհրաժեշտության դեպքում՝ մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում.

1.3.6. Կայքի սպասարկման ժամանակ հայտնաբերված սխալների ուղղում.

1.3.7. Որոնման համակարգերի համար Կայքի օպտիմալացման և համապատասխան կարգաբերումների իրականացում.

1.3.8. Կայքի հետ աշխատող Կոմիտեի անձնակազմի տեխնիկական աջակցության իրականացում.

1.3.9. Կայքի առանձին գրաֆիկական մասերի փոփոխությունների (որոնք չեն հանգեցնում Կայքի ընդհանուր արտաքին տեսքի փոփոխության) իրականացում, ըստ անհրաժեշտության և տրամադրված նյութերի.

1.3.10. Կայքի տվյալների շտեմարաններից անհրաժեշտության դեպքում՝ հաշվետվությունների արտահանում.

1.3.11. Կայքում ներդրված էլեկտրոնային ծառայությունների աշխատանքի ընթացքում հայտնաբերված թերությունների, ինչպես նաև սխալների վերացում.

1.3.12. Կայքում ներդրված էլեկտրոնային ծառայությունների ծրագրային ապահովման անխափան աշխատանքի ապահովում.

1.3.13. Անվտանգության SSL սերտեֆիկատի տրամադրում և տեղադրում սերվերի վրա.

1.3.14. Էլեկտրոնային աճուրդների անցկացման, ինչպես նաև պետական գույքի հաշվառման ավտոմատացված ու ամբողջական համակարգերի (այսուհետ՝ Համակարգ) ծրագրային ապահովում, ինչպես նաև Համակարգի ընթացիկ տեխնիկական սպասարկում.

1.3.15. Համակարգի միանվագ (սկզբնական) կարգաբերում.

1.3.16. Արձանագրված, այնպես էլ փորձագետի կողմից հայտնաբերված և հրատապ լուծում պահանջող գործընթացի իրականացում ներառյալ՝ ծրագրային ապահովման կարգաբերում, վնասված հատվածների կամ ամբողջականության վերականգնում, այդ թվում՝ Համակարգի թերի աշխատանքի ուսումնասիրում, անավարտ կամ թերի իրագործված հատվածների դուրս բերում, Համակարգի աշխատանքի խափանումների (ներառյալ՝ ծրագրային և այլ բնույթի թերությունների ու բացթողումների) վերացման (շտկման) նպատակով անհրաժեշտ տեխնիկական աշխատանքների կատարում.

1.3.17. Համակարգի կայքի դիզայնի արդիականացում, անհրաժեշտության դեպքում՝ փոփոխություն.

1.3.18. Համակարգի կայքի ֆունկցիոնալի անխափան ու մատչելի հասանելիության ապահովում.

1.3.19. Համակարգի ծրագրային ապահովման ընթացիկ լրամշակում, կառուցվածքային կատարելագործում և փոփոխություն, որը ներառում է" Համակարգի ծրագրային ապահովման կառուցվածքի կատարելագործման նպատակով դրանում անհրաժեշտ փոփոխությունների կատարում, Համակարգում կատարվող գործողությունների փոփոխության անհրաժեշտությունից բխող ծրագրային ապահովման մեջ փոփոխությունների կատարում, Համակարգում նոր գործողություններ կատարելու անհրաժեշտությունից բխող ծրագրային ապահովման մեջ փոփոխությունների կատարում, Համակարգում ֆունկցիոնալ վերափոխումների ու լրացումների կատարում, Համակարգի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր ընթացիկ թարմացումների և նորացումների տեղադրում, բացառությամբ՝ ամբողջովին նոր համակարգի ստեղծման դեպքի.

1.3.20. անհրաժեշտության դեպքում՝ տվյալների տեսակներին համապատասխան Համակարգի տվյալների շտեմարանների կառուցվածքներում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարում, ինչպես նաև Համակարգում տարբեր գործողությունների կատարման առանձին իրավունքների փոփոխությունների (ավելացում, նվազեցում) կատարելու հնարավորության ապահովում.

1.3.21. Համակարգի ծրագրային ապահովման մեջ յուրաքանչյուր լրամշակում, կառուցվածքային կատարելագործում և փոփոխություն (ներառյալ՝ դրանց խմբերը), կատարելու ավարտի Համակարգի ամբողջական փորձարկում.

1.3.22. Համակարգի փորձարկման անընդհատության ապահովում.

1.3.23. Համակարգի սպասարկում, որն նեառում է՝ Ծրագրային փաթեթի ֆունկցիոնալի սպասարկում (FrontEnd և BackEnd), անխափան հասանելիության ապահովում, Համակարգի սերվերային բաղադրիչների սպասարկում, Համակարգի ֆունկցիոնալի մասին ճշգրիտ տեղեկատվություն ստանալու հարցում, բազմաշերտ ցանցային անվտանգության (Firewall) ապահովում, ցանցային ներխուժման փորձերի ախտորոշում և արգելափակում, սերվերային սարքավորումների մոնիթորինգ.

1.3.24. Համակարգին տարբեր պետական մարմինների գոյություն ունեցող միացումների անխափան աշխատանքի ապահովում, սերվերների և երթուղավորիչների կարգաբերում և սպասարկում (Server/Router configuration and maintenance).

1.3.25. Համակարգի տվյալների բազայի օրական պահուստային կրկնօրինակում (backup) ֆիզիկական այլ հասցեում գտնվող կրիչի/սերվերի վրա.

1.3.26. Համակարգին, կամ դրա որոշակի ենթահամակարգերին ու ծառայություններին տարբեր շահառուների հասանելիության կարգաբերում, նրանց հասանելի ծառայությունների տեսակների սահմանափակումների ապահովում՝ ըստ իրենց IP ստատիկ հասցեների.

1.3.27. Անհրաժեշտության դեպքում՝ սերվերների վիրտուալ բաժանում, օպերացիոն համակարգերի տեղադրում, Համակարգի տեղափոխում նոր սերվերային միջավայր.

1.3.28. Սերվերների ծրագրային ապահովման և օպերացիոն համակարգերի թարմացում՝ ծրագրային ապահովման աշխատանքն ապահովող բոլոր սերվերների համար.

1.3.29. Համակարգի աշխատանքի ընթացիկ խափանումների վերաբերյալ մեկ ժամվա ընթացքում արձագանքում.

1.3.30. Անհրաժեշտության դեպքում՝ Համակարգում ինչպես նոր, այնպես էլ դրանում արդեն իսկ գրանցված օգտվողների փոփոխությունները (ավելացում, նվազեցում, հեռացում) նրա կողմից կատարելու հնարավորության ապահովում.

1.3.31. Համակարգի տվյալների շտեմարանների պահուստային պատճենների ստեղծում (օրական կտրվածքով), տվյալների շտեմարանների աշխատանքի մոնիտորինգ, անհրաժեշտության դեպքում՝ տվյալների շտեմարանների վերականգնում պահուստային պատճեններից.

1.3.32. Համակարգի գործող կայքում (էլեկտրոնային մատյան) գործարքների տվյալների և կատարված աշխատանքների ընթացքի արխիվացման հնարավորության ապահովում.

1.3.33. Անհրաժեշտության դեպքում՝ Համակարգից ցանկացած օգտվողի կողմից կատարված գործողությունների վերծանումների տրամադրում.

1.3.34. Սերվերների տեխնիկական և ծրագրային անվտանգության ապահովման և Համակարգի հետ կատարված աշխատանքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ամսական պարբերականությամբ տրամադրում.

1.3.35. Համակարգի հետ աշխատող Կոմիտեի անձնակազմին տեխնիկական աջակցության ապահովում, ինչպես նաև Համակարգից օգտվող պետական մարմինների ու կազմակերպությունների աշխատակիցների՝ կայքից գրագետ օգտվելու պահանջների ու պայմանների տեսական ու գործնական ուսուցում:

1.4. Փորձագետի համար Պայմանագրով նախատեսված աշխատանքը համարվում է համատեղությամբ աշխատանք:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Փորձագետը պարտավորվում է՝

2.1.2. Բարեխղճորեն կատարել Պայմանագրով ստանձնած աշխատանքները:

2.1.3. Պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը:

2.1.4. Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները:

2.1.5. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

2.2. Փորձագետն իրավունք ունի՝

2.2.1. Պայմանագրի 4-րդ կետի համաձայն ստանալու վարձատրություն:

2.2.2. Պահանջելու համապատասխան մարմնից ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքը:

2.2.3. Իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2.3. Համապատասխան մարմինը պարտավորվում է՝

2.3.1. Պայմանագրի 4-րդ կետի համաձայն վճարել փորձագետի աշխատավարձը:

2.3.2. Սահմանված կարգով փորձագետին տրամադրել ամենամյա և նպատակային արձակուրդ:

2.3.3. Ապահովել անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ:

2.3.4. Փորձագետին ծանոթացնել կազմակերպությունում գործող ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին:

2.3.5. Ժամանակին ապահովել փորձագետին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

2.3.6. Փորձագետի անձնական տվյալները մշակելիս պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահանջները:

2.3.7. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ և Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

2.4. Համապատասխան մարմինն իրավունք ունի՝

2.4.1. Ցանկացած պահին ստուգելու փորձագետին հանձնարարված աշխատանքների կատարման ընթացքը:

2.4.2. Փորձագետին ներգրավելու արտաժամյա աշխատանքների, որի տևողությունն իրար հաջորդող երկու օրերի ընթացքում չի կարող անցնել 4 ժամը:

2.4.3. Իրականացնելու աշխատանքային օրենսդրությամբ և Պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԵԺԻՄԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

3.1. Փորձագետի համար սահմանվում է 4-ժամյա աշխատանքային օր: Աշխատանքային օրվա սկիզբը սահմանվում է ժամը 9:00, ավարտը՝ ժամը 13:00: Աշխատանքը կատարվում է համատեղությամբ:

3.2. Փորձագետին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվում է ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ, ամենամյա վճարովի արձակուրդը տրամադրվում է հիմնական աշխատավայրում տրամադրվող ամենամյա արձակուրդի հետ միաժամանակ:

4. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար համապատասխան մարմինը փորձագետին յուրաքանչյուր ամիս վճարում է հիմնական աշխատավարձ 340 667 (երեք հարյուր քառասուն հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ (4-ժամյա աշխատանքային օրվա համար):

4.2. Փորձագետին արտաժամյա, գիշերային, հանգստյան և ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքների ներգրավելու դեպքում վարձատրությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված նվազագույն չափերով:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ, ԼՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

5.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ աշխատանքային օրենսգրքով նախատեսված դեպքերի: Պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են լրացուցիչ համաձայնագրերով, որոնք կհանդիսանան Պայմանագրի անբաժան մասը:

5.2. Պայմանագիրը լուծվում է աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված կարգով և դեպքերում, ինչպես նաև առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգի խախտմամբ կնքված լինելու դեպքերում:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև **2025 թվականի ապրիլի 15-ը**:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունների չկատարման, կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Կոմիտեի գլխավոր քարտուղար

Մարո Մարգարյան

(ստորագրությունը)

Կ.Տ.

Փորձագետ

Միեր Հովսեփյան

(ստորագրությունը)